ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ
ՊԵԴՐՈ ԶԱՐՈԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Զարոկյան,

ի պատասխան Ձեր 25.12.2023թ. գրության՝ ճանապարհային ինժեներների հետ պայմանագրերի ուսումնասիրման և կնքման հարցի վերաբերյալ, տեղեկացվում է, որ Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին օրենքի ՀՕ-5-Ն 26.12.2008 57-րդ հոդվածի 2-րդ կետով քաղաքապետին պատվիրակված լիազորություններն են.

1) Երևանի տարածքում ճանապարհային երթևեկության կարգավորումը՝ ճանապարհային գծանշումների, ինչպես նաև երթևեկության նշանների և լուսացույցների (բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ժամանակավոր տեղադրվածների) տեղադրման միջոցով.

2) կազմակերպում է Երևանի մետրոպոլիտենի աշխատանքները:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության գործառույթների շրջանակում առաջին ենթակետով նախատեսված աշխատանքների համար կատարվում է ծառայությունների գնման գործընթաց՝ ՀՀ գնումների մասին օրենքի համաձայն:

Միաժամանակ նշվում է, որ գնահարցումների մասով Ձեր կողմից տրամադրված տեղեկությունը ընդունվել է ի գիտություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ